ղիկոսութեան, սոյնպէս եւ ձեռնադրեալ եպիսկոպոսունք նոցա եւ քահանայքն՝ տգէտք, խոտանք եւ անպիտանք, ըստ սաղմոսին որք էին լեալ պաշտօնեայք որովայնի՝ հանապազ ի դիներբուս դեղերեալք՝ գուսանօք, իբր զմարմնաւոր իշխանս, յառաւօտ մինչեւ ցերեկոյ հետեւեալ կատակաց եւ լկտի բանից եւ դատարկութեան» (Դաւր. Գլ. ԻԴ, եր. 290)։

Եւ այս բոլորից յետոյ՝ յուսահատ բացականչում է.

«Եթէ եկեղեցականք այսպէս, զի՞նչ եւս ասացից զաշխարհականաց»։

Ուրեմն այսչափ ստոր էր եւ անմխիթար հայ ժողովրդի ու նրա ղեկավար խաւի — կաթողիկոսից սկսած մինչեւ յետին գիւղական քահանան — բարոյական աստիճանը, Ջուղայեցուն մօտ ժամանակներում — նրա օրով; նրանից առաջ եւ նրանից յետոյ։

Մտաւոր անկումը աւելի սոսկալի էր։ Գիրք չկար, գրականութիւն չկար։ Եղած գրքերն էլ չէին կարդացւում, որովհետեւ կարդացող չկար. «Նրանք արհամարհուած, գցուած էին անկիւններում, ծածկուած հողով եւ մոխրով, որովհետեւ ոչ գիր գիտէին, ոչ էլ գրքի զօրութիւնը։ Նոյն իսկ աստուածաշունչ գիրքը կարդացող չկար» (Դաւր. ԻԴ. եր. 291)։

Ճիշդ է, թէեւ ԺԷ. դարի սկիզբներից — ինչպէս տեսանք — մեզանում սկսուել էր վերածնութեան շարժումը, սակայն նրա դծած ակօսը մեր կեանքում դեռ եւս շատ էր թոյլ, երկու պատճառով.— առաջին՝ որ այդ շարժումը դեռ եւս մանուկ էր, նորածին, իսկ մի ամբողջ կեանք յեղաշրջելու համար, այն էլ մեր կեանքի նման յետամնաց մի կեանք, հարկաւոր էր աւելի երկար ժամանակ։ Երկրորդ՝ տիրող խաւարը չա՞տ էր զօրեղ եւ հեշտ չէր շուտով նրան ցրելը։

Այո՛, արդէն ունէինք բաւականաչափ վանքեր-դպրոցներ, ունէինք մէկ շարք աշքի ընկնող դէմքեր, սակայն այդ բոլորը, համեմատած համատարած խաւարի ու տգիտութեան հետ, մի-մի աղօտ կանթեղներ էին միայն եւ ուրիշ ոչինչ։ Ազգային զանգուածը դեռ չա՞տ էր խաւար ու յետամնաց։ Ահա թէ ինչո՛ւ պատմագիրը ցաւով գրում է. «Աղաւաղեալ, եղծեալ էր բարեկարգութիւն ի վերին աշխարհէս Հայոց եւ փոխանակ նորա արձանացեալ եւ արմատացեալ անկարգութիւն» (Գլ. ԻԴ. եր. 291)։

Այս ամէնի վրայ եթէ աւելացնենք նաեւ տիրողների կրօնական անհամբերութիւնից առաջացած թշուառութիւնները, ապա պարզ կը լինի, թէ ի՛նչ դժոխք էր ներկայացնում իրենից հայ կեանքը տաճիկ եւ պարսիկ տիրապետութեան նեղքոյ ընդհանրապէս եւ Յակովբ Ջուղայեցու ժամանակներում մասնաւորապէս։ Եթէ նոյն իսկ այսօր, XX-րդ դարում, կրօնը մահմեդական այդ երկրներում, մանաւանդ Պարսկաստանում, դեռ եւս այնքան խոշոր դեր է խաղում, որ յաճախ միայն նրանով են որոշւում մարդու եւ քաղաքացու իրաւունքները, պետութեան եւ հպատակների փոխ-յարաբերութիւնները, ընկերային բոլոր կարգի յարաբերութիւնները, ապա միանգամայն հասկանալի է, թէ ի՛նչ պիտի լինէր դրութիւնը 16–17 դարերում, խաւարի ու մոլեռանդութեան այդ շրջանում։

Այդ օրերում կրօնն էր մարդկային արժանաւորութիւնների գլխաւոր չափանիշը — ե՛ւ Պարսկաստանում, ե՛ւ Տաճկաստանում։ Ով մահմեդական էր — նա բարձր էր, ազնիւ, արտօնեալ եւ պետութեան կողմից հովանաւորուած։ Ընդհակառակը. ով մահմեդական չէր, ուրիշ խօսքով՝ ով քրիստոնեայ էր, մանաւանդ հայ ժողովրդի նման թոյլ ու անպաշտպան, նա ստոր էր, պիղծ, օրէնքից դուրս եւ իր բոլոր ունեցուածքով մահմեդականին կերակուր լինելու արժանի։

Մահմեդականութիւնն էր պետական կրօնը։ Նրանով էին տոգորուած պետական բոլոր օրէնքներն ու կարգերը. նրանով էին պայմանաւորուած մարդկային բոլոր փոխ-յարաբերութիւնները, մասնաւորապէս պետութեան վերաբերմունքը դէպ իր հպատակները։ Եթէ դրա վրայ էլ աւելացնենք նաեւ այս, որ մինչեւ օրս էլ տակաւին ամենամեծ աստուածահաճոյ գործն է համարւում մահմեդականի համար ոչ-մահմեդականին — մանաւանդ քրիստոնեային — մահմեդական դարձնելը, ապա այլ եւս ո՛չ մի կասկած չի մնայ, թէ մահմեդական լծի տակ ի՛նչ դառնութիւններ պիտի ճաշակէր քը-